ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՅՐՈՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ՓԱՐԻԶԻ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական Կրթական տարածաշրջանային ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ.Գ.Մանասյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր,պրոֆեսոր
Ա. Վ. Դարբինյան

Տնտեսագիտության թեկնածու,դոցենտ
Ա. Հ. Հակոբջանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 29-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. հոկտեմբերի 28-ին

Տնտեսագիտության թիվ 015
Մասնագիտական խորհրդի
Գիտ. քարտուղար, տեխ.գ.դ. պրոֆեսոր՝ **Ա.Հ.Առաքելյան**

Թեմայի արդիականությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) ֆինանսական կառավարման կատարելագործման հայեցակարգային մոտեցումներն իրենց մեջ ընդգրկում են մի շարք հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրության ժամանակ մի խումբ տեսաբաններ, որոնց աշխատանքները քննարկվում են ատենախոսության մեջ, առաջ են քաշել բազմաթիվ մոտեցումներ, տեսակետներ, վարկածներ, որոնք կարող են ազդել բուհերի ֆինանսական քաղաքականության վրա:

Վերջին տասնամյակում մի շարք բարեփոխումներ են իրականացվել ՀՀ բուհերի վարչական կառավարման, մասնագիտությունների ձևավորման, ֆինանսական քաղաքականության, ուսանողների կրթական վարկավորման, միջազգային կրթական համակարգին ինտեգրման, միջազգային համաձայնագրերի ստորագրման և մի շարք այլ բնագավառներում: Այդուհանդերձ, ՀՀ-ում բարձրագույն կրթության համակարգն ամբողջական և կայացած համարել չի կարելի և շատ հիմնախնդիրներ լուծման, իսկ ֆինանսական կառավարման հարցերը կատարելագործման կարիք ունեն:

Բուհերի ֆինանսական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման ու կատարելագործման հիմնախնդիրները, հանդիսանալով բազմաթիվ հետազոտողների ուսումնասիրության առարկա, երբեք չեն կորցնում իրենց այժմեականությունը, քանի որ բուհերի արտաքին միջավայրի զարգացման գործընթացն անընդհատ է, ուստիև, կրթական համակարգին ներկայացվող պահանջներն անընդհատ փոփոխվող: Հետևապես, բուհական համակարգի ֆինանսական կառավարման հիմնահարցերը մշտապես պահանջում են ճկուն ու անընդհատ նորացվող մոտեցումներ, իսկ բազմաթիվ այլընտրանքային տարբերակներից ճիշտ ընտրություն կատարելը բավականին կարևոր է և առանցքային:

Այս առումով, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը թվարկված միտումներով և հիմնախնդիրներով, որոնք պահանջում են խոր ու գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություն:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բուհական համակարգն է՝ դրանում առկա հիմնախնդիրների, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ ունեցած տարաբնույթ կապերի համալիրով, իսկ ուսումնասիրության առարկան՝ ՀՀ բուհական համակարգի ֆինանսավորումն ու ֆինանսական կառավարումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է՝ բացահայտել ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսական համակարգի կառավարման հիմնախնդիրները և մշակել համակարգի կատարելագործման և արդյունավետության բարձրացման այնպիսի մեխանիզմներ, մոտեցումներ և գործնական քայլեր, որոնք կլուծեն բարձրագույն կրթության ֆինանսավորման հետ կապված խնդիրները՝ նպաստելով ՀՀ բարձրագույն կրթության որակին, բուհտնտեսություն փոխգործակցության կատարելագործմանը, կրթության մատչելիությանն ու հավասարությանը:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել բարձրագույն կրթության համակարգի իրավական և կառուցվածքային բարեփոխումներն ու զարգացման արդի հիմնախնդիրները,
- բացահայտել պետական կարգավորման մեխանիզմները բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման համակարգում,
- բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման համաշխարհային փորձի ուսումնասիրության հիման վրա՝ դիտարկել հանրապետությունում բուհերի ֆինանսական կառավարման նոր մեխանիզմների ներդրման հնարավորությունները,
- ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն կրթության զարգացման արդի միտումներն ու հիմնախնդիրները՝ ըստ ամենայնի, օգտագործելով համակարգի զարգացումը բնութագրող հիմնական վիճակագրական տվյալների երկարամյա շարքերը,
- վերլուծել ՀՀ բարձրագույն կրթության զարգացման հիմնախնդիրները՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության և ֆինանսավորման համատեքստում,
- մշակել բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման ուղիներ և գնահատել դրանց ազդեցությունը կրթության որակի վրա,

Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության, ֆինանսների կառավարման դասական և ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, դոկտրինաներն ու հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները, բուհերի ֆինանսական կառավարման համաշխարհային պրակտիկայում տեղ գտած բարեփոխումները, հայ և արտասահմանյան հետազոտողների կողմից բուհերի ֆինանսական քաղաքականության կատարելագործման բնագավառում կատարած ուսումնասիրությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և օրենքները և իրավական ակտերը, ՀՀ կառավարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ ֆինանսների նախարարությունների, միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրոստատ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, ՄԱԿ և այլն) հրապարակումները և պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, իրավիճակային, ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական, խմբավորումների և համեմատական վերլուծությունների, ինչպես նաև էքստրապոլյացիայի մեթոդներ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ արդյունքներում՝

- Բարձրագույն կրթական հաստատությունների ֆինանսական կառավարման համաշխարհային փորձի, ինչպես նաև ՀՀ բուհերի զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է ՀՀ բուհական համակարգի ֆինանսական հոսքերի կատարելագործման այլընտրանքային մոտեցում և մշակվել է կրթության ֆինանսավորման նոր մեխանիզմ՝ կապված բարձրագույն կրթության ֆինանսավորման երաշխիքային հիմնադրամի (հետայսու՝ ԲԿՖԵՀ) ստեղծման հետ:

- Մշակվել են բուհական համակարգի ֆինանսական կառավարման կատարելագործման մեթոդներ: Մասնավորապես, բարձրագույն կրթության ոլորտին բյուջետային հատկացումների, առանձին առարկայական ծրագրերի գնագոյացման, ինչպես նաև ԲԿՖԵՀ-ին վճարվելիք գումարի չափի հաշվարկման մեթոդներ և բանաձևեր:
- Ուսումնասիրելով ՀՀ բուհական համակարգի միջազգայնացման հիմնահարցերը՝ տրվել են գործնական և մեթոդական առաջարկներ բարձրագույն կրթության ծառայությունների արտահանման և, այդպիսով, ֆինանսական ներհոսքի խթանման ուղղությամբ:
- ՀՀ բուհական համակարգի ֆինանսական կառավարման վրա ուղղակի և անուղղակի ազդող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են բուհերի ֆինանսական հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները և մշակվել են ոլորտի նորմատիվաիրավական դաշտի կատարելագործման համալիր առաջարկություններ :

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական արդյունքների նշանակությունը կայանում է նրանում, որ մշակված գիտատեսական ընդհանրացումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների (ՀՀ ԱԺ, Կառավարություն, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ ֆինանսների նախարարությունների և այլն) կողմից հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթեր մշակելու գործընթացում, ինչպես նաև բարձրագույն կրթական հաստատությունների ֆինանսական հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացման և արդիականացման ծրագրերի կազմման ընթացքում:

Ատենախոսության տեսական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել կրթական համակարգի կառավարման և ֆինանսավորման հիմնախնդիրներով զբաղվող տնտեսագետների, ֆինանսիստների և բարձրագույն կրթության համակարգում ընդգրկված մասնագետների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Տնտեսագիտության ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 5 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 6 հավելվածից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 154 էջ՝ առանց հավելվածների և գրականության ցանկի:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը և ներկայացվել թեմայի ուսումնասիրվածության աստճանը: Տրված են որոշ մեկնաբանություններ ոլորտի հիմնական հետազոտողների մոտեցումների վերաբերյալ: Նշվել են նաև հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը, ինչպես նաև աշխատանքի գիտական նորույթները:

Ատենախոսության առաջին՝ ***"Բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման տեսամեթոդական հիմքերը"*** գլխում ուսումնասիրվել են կրթության տնտեսագիտության, կրթության ֆինանսավորման և ֆինանսական կառավարման հայ և արտասահմանցի հեղինակների տեսամեթոդական դրույթները:

Այսպես, երբ ֆինանսավորման այս կամ եղանակը ունենում է հաջողություն այն կիրառող երկրներից մեկում, ապա այդ հանգամանքը բոլորովին էլ չի նշանակում, թե տվյալ եղանակը կիրառելի է նաև մեկ այլ երկրում, կամ կունենա համանման հաջողություն: Այդ հանգամանքը չի նշանակում նաև, որ տվյալ մոտեցումը զերծ է որոշակի բացերից կամ թույլ կողմերից:

Գրականության մեջ կրթությունը սահմանվում է տարբեր կերպ: Սույն ուսումնասիրության շրջանակներում ընդունվել է կրթության ընդհանուր սահմանումը: Ըստ այդմ՝ "Կրթությունը գործընթաց է, որը մարդուն տալիս է գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ զարգացնելով աշխատանքային ռեսուրսների տեսա-գործնական և գործառութային որակական ունակությունները"[1]: Բացի այդ, ներկայումս տեսաբանների շրջանում կրթությունը դիտվում է ոչ միայն որպես սոցիալ-մշակութային, այլ նաև տնտեսական երևույթ: Կրթությունը որպես տնտեսական հասկացություն է դիտվում մի շարք այլ հեղինակների կողմից, ինչպիսիք են Մ.Վ. Բադալյանը[2], Ա.Մ. Օզինյանը[3], Ս.Ա.Դյատլովը [4], Դ.Հոլլը[5] և այլն:

Կրթության սահմանման և բնորոշման առավել տնտեսագիտական ձևակերպում է տվել Ե.Ն. Ժիլցովը[6], ըստ որի՝ կրթությունը ոչ միայն հանրային բարիք է, այլ նաև ունի սպառողական բարիքներին բնորոշ հատկություններ, ուստի այն համարվում է "Խառը" կամ "Մերիտորային բարիք": Ընդ որում՝ տնտեսական ասպեկտներն առավել բնորոշ են այդ բարիքին կրթության մակարդակի բարձրացմանը զուգընթաց:

---

1 Сборник статей "Актуальные экономические проблемы российской высшей школы", под ред. Е.Н. Жильцова, С.И. Голоуховой, В.П. Панкратовой, Москва, ТЕИС, 2005. // И.Г. Телешова "Направления совершенствования системы образования" с.67.

2 Բադալյան Մ.Վ. "Բարձրագույն կրթության զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)" // ատենախոսություն տնտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման համար, Երևան – 2005թ.:

3 Озина А.М., Петров Ю.Н. "Финансовый механизм управления образовательным учреждением:", СПб: 1996.

4 Дятлов С.А. "Экономика образования в условиях переходного периода", СПб.: изд-во С-Петер. университета.

5 Dumbea Hall, "Education economics", Workshop, 6-7 April 2004, pp 5-8.

6 Сборник статей "Актуальные экономические проблемы российской высшей школы", под ред. Е.Н. Жильцова, С.И. Голоуховой, В.П. Панкратовой, Москва, ТЕИС, 2005. с.19.

Համանման մտքի է հանգել նաև Մ.Վ. Բադալյանը[7], ով նշում է. "Բարձրագույն կրթության՝ որպես ոչ արտադրական ոլորտի նկատմամբ մոտեցումը աստիճանաբար հաղթահարվում է: Հետազոտելով կրթական գործունեության տնտեսական կողմը՝ բարձրագույն կրթությունը պետք է դիտարկել որպես հասարակական վերարտադրության կարևոր բաղկացուցիչ":

Հարկ է նշել նաև, որ անմիջականորեն կապված լինելով աշխատանքային ռեսուրսների և մարդկային կապիտալի հետ՝ կրթությունը անխուսափելիորեն հայտնվել է տնտեսագիտական մտքի ուսումնասիրման դաշտում, որի հետևանքով էլ արդեն 20-րդ դարի 2-րդ կեսից հիմք դրվեց տնտեսագիտության նոր ուղղությանը՝ "Կրթության տնտեսագիտությանը"[8]:

Կրթության տնտեսագիտության ուսումնասիրման դաշտում գտնվում են 3 հիմնական խումբ խնդիրներ[9].

1. կրթության ազդեցությունը տնտեսական աճի վրա[10] (Թ.Շուլց[11], Ռ.Սոլոու, Մ.Բլաուգ[12], Պ.Ռոմեր[13] և այլոք),
2. կրթության հանդեպ անհատական պահանջարկը և կապը կրթության և աշխատաշուկայի միջև (Հ.Բեկկեր[14], Ժ.Մինսե[15], Դեգու, Է.Մորին[16], և այլոք),
3. կրթական համակարգերի կառավարումը (Մ. Փրաուլ, Է. Մորգան[17], Ժ.Դելոր[18] և այլոք):

Նշենք, որ սույն ուսումնասիրության առարկան գտնվում է կրթության տնտեսագիտության 3-րդ խումբ խնդիրների շրջանակում:

Առհասարակ բուհական համակարգի ֆինանսական կառավարումը կրթության համակարգի կառավարման առանցքային բաղադրիչներից է հանդիսանում: Ընդ որում, վերջինիս դերն ու նշանակությունն առավել մեծացավ հատկապես վերջին տասնամյակների ընթացքում՝ 1960-ական թթ.-ից սկսած, երբ աշխարհի բարձրագույն կրթության համակարգում ներգրավվածների թիվն աճեց 13 մլն-ից

---

7 Բադալյան Մ.Վ. "Բարձրագույն կրթության զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)" // ատենախոսություն տնտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման համար, Երևան – 2005թ. էջ՝ 29:

8 Dumbea Hall, "Education economics", Workshop, 6-7 April 2004, pp.5-8.

9 "Administrer, gƣrer, ƣvaluer les systƢmes ƣducatifs", sous la direction de Jean-Jacques Paul, ESF 1999, Paris.

10Հատկանշական են այս բնագավառի հետազոտությունների համար շնորհված 3 Նոբելյան մրցանակները Թեոդոր Շուլցին (1979թ.), Ռոբերտ Սոլոուին (1987) և Հարի Բեկկերին (1992թ.):

11 T.Schultz, ‚The Economic Value of Educationƨ, New York: Columbia University Press. 1963.

12 M.Blaug, ‚An Introduction to the economics of educationƨ, Hardmondsworth, Penguin Books, 1970.

13 P.Romer, "Two Strategies for Economic Development: Using Ideas and Producting Ideas", The WB Economic Review, 1992, pp.63-91.

14 Беккер Г. "Человеческий капитал: теоретический и эмпирический анализ" // США: экономика. Политика, идеология. 1993. N 11-12.

15 J.Mincer, ‚On-the-Job Training: Costs, Returns and Some Implicationsƨ, The Jurnal of Political Economy, vol. LXX, Suppl.: October 1962, pp.50-79.

16 D.Goux, E.Morin, "Education, experience et salaire", Economie et prevision, 116, 1994, pp.155-178:

17 Malcolm Prowle and Eric Morgan, "Financial Management & Control in Higher Education", by Routledge 2005. p.30.

18 J.Delors, "L'Education: un tresor est cache dedans", Rapport a l'UNESCO., Paris, Edition UNESCO et Odile Jacob, 1996.

110 մլն ուսանողի[19], իսկ միայն վերջին 10 տարվա (2000-2010թթ.) բուհական համակարգի ներգրավվածության աճը, 19%-ից հասավ 29%-ի՝ աճելով շուրջ 10 տոկոսային կետով: Կրթության նման աննախադեպ մասսայականացումն իր ուղղակի հետևանքներն ունեցավ համակարգում ֆինանսական միջոցների անբավարարության հարցում: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում բուհական համակարգի ֆինանսավորման պետական միջոցները դարձան անբավարար՝ առաջացած աննախադեպ պահանջարկը բավարարելու հարցում: Այս ամենին գումարվեց նաև գրեթե բոլոր երկրներում միջոցների բաշխման գերակայությունների տեղաշարժը հօգուտ միջնակարգ ընդհանուր կրթության: Բարձրագույն կրթության մասսայականացման արդյունքում էապես անկում ապրեց նաև մեկ ուսանողին բաժին ընկնող ծախսերի ծավալը[20], որը հղի էր կրթության որակի վրա ուղղակի ազդեցությամբ :

Նման իրավիճակում կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության[21] ֆինանսավորման խնդիրը լուծելու նպատակով՝ տարբեր երկրների գիտական և քաղաքական միտքն ուղղվեց ոչ միայն դեպի ֆինանսական կառավարման նոր մոտեցումների և մեխանիզմների մշակմանը, այլ նաև ֆինանսավորման նորանոր աղբյուրների որոնմանը: Այս ամենի արդյունքում վերջին տասնամյակներին ամբողջ աշխարհում առաջանցիկ տեմպերով ավելացան բուհական համակարգի ֆինանսավորման մեխանիզմների տեսակներն ու ուղիները: Ի հայտ եկան միջոցներ ներգրավելու այլընտրանքային ուղիներ:

Այսպես, բուհական համակարգի ֆինանսավորման աղբյուրները բազմազան են և բազմաբնույթ: Խնդրի ուսումնասիրողներից Ժ.Կ. Իշեն[22] տարանջատում է կրթության ֆինանսավորման աղբյուրների հետևյալ տեսակները.

1. պետական կամ հանրային միջոցներ (պետբյուջե),
2. տարածքային կառավարման օղակներ,
3. անհատներ, ընտանիքներ,
4. ձեռնարկություններ,
5. բարեգործներ,
6. արտաքին ֆինանսավորում:

Ընդ որում, հեղինակն ընդգծում է, որ ֆինանսավորման նշյալ աղբյուրները տարբերվում են իրենց համամասնությամբ՝ կախված ինչպես երկրից, այնպես էլ կրթական մակարդակից ու տեսակից: Օր.՝ ձեռնարկություններն առավել հակված են ֆինանսավորել բարձրագույն կամ շարունակական կրթությունը, իսկ պետությունը՝ ընդհանուր միջնակարգ կրթությունը:

Ըստ Ջ. Խալմիի և Ա.Հոպմանի[23]՝ կրթության ֆինանսավորման առաջին հիմնական աղբյուրը ուսման վարձավճարների ավելացումն է ֆինանսավորման ընդհանուր ներհոսքի մեջ: Իր նշանակալիությամբ երկրորդ աղբյուրի դերում, հեղինակները տեսնում են բուհական ծառայությունների և նրան հարակից այլ

---

19 The Financing of Universities, “Higher Education in the World 2006”, GUNI – Global University Network for Innovation, p.(xi).

20 Օր.՝ Մեծ Բրիտանիայում 2001/02թ.-ին 1989/90թ. համեմատությամբ մեկ ուսանողին բաժին ընկնող ծախսերի քանակը նվազեց 38%-ով՝ իջնելով 8000-ից 5000 ֆունտի:

21 Հետագա մեր շարադրանքում “բարձրագույն կրթության համակարգ” ձևակերպման փոխարեն մենք կկիրառենք “բուհական համակարգ” ձևակերպումը:

22 J.C. Eicher – le cout et le financement de l’education “Administrer, gérer, évaluer les systèmes éducatifs”, sous la direction de Jean-Jacques Paul, ESF 1999, Paris, pp.67-97.

23 Jamil Salmi and Arthur M.Hauptman, The Financing of Universities, “Higher Education in the World 2006”, GUNI – Global University Network for Innovation, pp.60-83.

ծառայությունների (հետազոտություն, խորհրդատվություն, մասնավոր դասընթացներ և այլն) վաճառքը: Վերջապես երրորդ, ամենաքիչը հանդիպող աղբյուրն, ըստ հեղինակների, ֆինանսավորման պարտատոմսային յուրահատուկ մեթոդների կիրառումն է, որը հնարավորություն ընձեռեց ճկուն կերպով ներգրավել մասնավոր միջոցներ:

Ոլորտի հետազոտողներ Մ.Փրոուլը և Է.Մորգանը[24] վեր հանեցին կրթության ֆինանսավորման 5 հիմնական աղբյուրներ, որոնք իրենց բնույթով էականորեն չեն տարբերվում վերը նշված Ժ.Կ. Իշեի կողմից առաջարկվող խմբավորումից.

1. հանրային ֆինանսավորում,
2. բուհական ծառայություններից օգտվողների կողմից կատարվող մուտքեր,
3. ինստիտուցիոնալ նվիրատվություններ,
4. նախկին շրջանավարտներից եկող միջոցներ,
5. ֆինանսավորման այլ աղբյուրներ:

Բուհական համակարգի ֆինանսավորման եղանակների և մեխանիզմների ամբողջական պատկեր է ներկայացվել հեղինակներ Ջ.Սալմիի և Ա. Մ.Հոպմանի կողմից [25]: Այդ հեղինակները համակարգել են ժամանակակից բոլոր այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնք մշակվել և ներդրվել են աշխարհի տարբեր երկրներում: Հեղինակները համակարգի ֆինանսավորման մեթոդները ներկայացնում են երկու հիմնական խմբով՝

1. բուհական համակարգի ուղղակի ֆինանսավորում,
2. համակարգի անուղղակի ֆինանսավորում:

Ընդ որում, վերոնշյալ 2 խմբերն ունեն իրենց ենթախմբերը: Ստորև ներկայացված են բուհական համակարգի ֆինանսավորման բոլոր եղանակները:

Համակարգի ուղղակի ֆինանսավորման պարագայում բուհական հաստատությունները ներկայացնում են պետությանը սեփական ֆինանսական կարիքները, իսկ պետությունը, հիմնվելով այս կամ այն չափանիշի վրա տրամադրում է համապատասխան ֆինանսավորումը: Հիմնականում այս ֆինանսավորումից օգտվողի դերում հանդես են գալիս պետական բուհերը, սակայն կան նաև երկրներ (օր.՝ Նոր Զելանդիան կամ Չիլին), որտեղ նշյալ ֆինանսավորման եղանակից օգտվում են նաև մասնավոր բուհերը:

Ֆինանսավորման այս մոտեցումը ներառում է հետևյալ երկու ենթախմբերը.

1.1 ներդրումների, գործառույթների և նպատակադրումների ֆինանսավորում (*Funding instruction, operation, and investment*),

1.2 հետազոտությունների ֆինանսավորում (*Funding of research*):

1-ին ենթախմբի 4 հիմնական սկզբունքները կայանում են հետևյալում.

- բանակցված բյուջետային հատկացում (*Negotiated budgets*),
- բանաձևով հաշվարկվող հատկացում (*Formula Funding*),
- հատուկ ֆոնդերից հատկացում (*Categorical programs/ Funding specific purposes*),
- կատարողականության ցուցանիշներով պահմանավորվող հատկացում (*Performance-based formula components*):

---

24 Malcolm Prowle and Eric Morgan, “Financial Management & Control in Higher Education”, by Routledge 2005, p.39.

25 Jamil Salmi and Arthur M.Haupman, “Resource allocation mechanisms in tertiary education: a typology and an assessment”, “Higher Education in the World 2006”, Global University Network for Innovation, pp.60-83.

Ըստ Ջ.Սալմիի և Ա.Հոպմանի[26] ՝ բուհական համակարգում ռեսուրսների բաշխումը կարող է հետապնդել երեք հիմնական նպատակ, որոնք ներկայացված են ստորև.

- ✓նպատակ 1. Կրթության մատչելիություն և հավասարություն,
- ✓նպատակ 2. Արտաքին արդյունավետության մեծացում՝ որակի և համապատասխանեցման ապահովմամբ,
- ✓նպատակ 3. Ներքին արդյունավետության մեծացում և հարատևություն,

Կրթության մատչելիության խնդիրը գտնվում է ներկայիս գրեթե բոլոր երկրների ուշադրության կենտրոնում: Այս հիմնարար խնդիրը լուծելու համար երկրները ձգտում են մշակել մեխանիզմներ, որով հնարավոր է բացահայտել մատչելիության խնդիրները և տալ որոշակի լուծումներ: Նույնիսկ այն երկրներում, որտեղ հաջողվել է հասնել կրթության աննախադեպ մատչելիության, այնուամենայնիվ, շարունակում են մնալ որոշ խնդիրներ՝ կապված սեռային, ազգային, սոցիալական, տարիքային և այլ բնույթի խտրականությունների հետ:

Ինչ վերաբերում է 2-րդ նպատակին, ապա հարկ է նշել, որ "ատրաքին արդյունավետություն" հասկացությունը սահմանվում և մեկնաբանվում է տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ: Այսպես, ըստ Է. Օրիվելի և Ֆ. Օրիվելի[27] արտաքին արդյունավետությունը ցույց է տալիս համակարգի և արտաքին միջավայրի պահանջներին համապատասխանելիությունը, թե որքանով են շրջանավարտները կարողանում գտնել աշխատանք և հմապատասխանել որակական տվյալներով աշխատաշուկայի պահանջներին: Ըստ նրանց՝ արտաքին արդյունավետությունը չափվում է հետևյալ ցուցանիշներով.

- ✓ բուհական համակարգում ներգրավվածությունը (համախառն և զուտ),
- ✓ ուսման սպասվող տարեիների թիվը (ցույց է տալիս, թե ընդունվածների քանի տոկոսն է դառնում դիպլոմավորված շրջանավարտ),
- ✓ շրջանավարտների ստացած գիտելիքների որակը:

Բարձրագույն կրթության համակարգում ռեսուրսրների բաշխման 3-րդ ռանցքային նպատակադրումն է ներքին արդյունավետության աճը և կայուն զարգացման ապահովումը:

Բնութագրելով ներքին արդյունավետությունը՝ Ջ.Սալմին և Ա.Հոպմանը [28] նշում են, որ այն ունի մի քանի բաղադրիչ: Առաջինը ծախսերի խնայումն է արդյունքի ստացման ընթացքում: Մյուս բաղադրիչը միևնույն ծախսերի դեպքում արդյունքի մեծացումն է (որակավորված շրջանավարտներ): Այս վերջին 2 մոտեցումները միասին ապահովում են բուհի ներքին արդյունավետությունը և հարատև զարգազման հիմք են հանդիսանում: Ստացվում է, որ ներքին արդունավետության ապահովման առաջին ուղին <u>ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործումն է:</u>

Ամփոփելով ներքին և արտաքին արդյունավետության նպատակադրումների քննարկումը՝ 1-ին գլխում նշվում է, որ պետության կողմից ցանկալի նպատակադրմանը հասնելու համար անհրաժեշտ է կիրառել ֆինանսավորման մի քանի եղանակի համակցում: Ֆինանսավորման եղանակների տեսականին

---

26 Նույն տեղում:

27 E. Orivel, F. Orivel "Administrer, gérer, évaluer les systèmes éducatifs", sous la direction de Jean-Jacques Paul, ESF 1999, Paris, p.185.

28 Jamil Salmi and Arthur M.Haupman, "Resource allocation mechanisms in tertiary education: a typology and an assessment", "Higher Education in the World 2006", Global University Network for Innovation, pp.60-83.

ընտրելուց զատ, որպես հաջորական փուլ, պետությունը պետք է որոշի և սահմանի դրանց չափաբաժինները, ինչպես նաև խուսափի միանշանակ որոշումներից, քանի որ միջազգային փորձը ցույց է տալիս, որ գոյություն չունի ֆինանսավորման եղանակների և արդյունավետության միջև միանշանակ և վերջնական կախվածություն:

Ատենախոսության երկրորդ ***"ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները"*** գլխում, ուսումնասիրվում են ՀՀ բուհական համակարգի զարգացումները, ֆինանսավորման հիմնախնդիրները թե ներքին և թե միջազգային համատեքստում:

Այսպես, վերջին տարիներին ՀՀ բուհական համակարգն ստացավ ֆինանսական բավարար լիազորություններ՝ ֆինանսական միջոցները տնօրինելու համար, ինչպես նաև ունեցավ Հայաստանի պատմության մեջ նախադեպը չունեցող քանակական զարգացումներ[29]: Այսինքն, զգալիորեն աճեց ուսանողների թվաքանակը՝ բարձրագույն կրթությունը դարձնելով առավել մասսայական:

Այսպես, եթե 1990թ. ՀՀ բուհական համակարգ էին ընդունվել շուրջ 13.000 ուսանող, ապա արդեն 2010թ.-ին այդ թիվը հասավ շուրջ 26.000-ի, այսինքն՝ 2 անգամ ավել: Ինչ վերաբերում է համակարգում սովորող ուսանողների թվաքանակին, ապա 1990թ.-ին 68.000–ի փոխարեն 2010թ.-ին սովորել են ավելի քան 110.000 ուսանող: Հատկանշական է, որ 1995թ.-ին առաջին անգամ արձանագրվել է նաև ՀՀ մասնավոր բուհերում ուսանողների թվաքանակ (14.500 ուսանող), որը կազմել է համակարգի ուսանողների 27%-ը: Ստացվում է, որ ուսանողների թվաքանակի նման աճին նպաստել է նաև մասնավոր բուհերի ստեղծումը: Պարզվել է նաև, որ վերջին տարիներին ՀՀ բուհական համակարգում պետական բուհերը առավել մեծ տեմպերով են ներգրավում ուսանողներ, քան մասնավոր բուհերը:

Ինչ խոսք, ՀՀ բուհական համակարգում համախառն ներգրավվածության նման աննախադեպ աճն ունի իր դրական կողմերը՝ հաշվի առնելով կրթության հասանելիության անհրաժեշտությունը: Սակայն նման առաջանցիկ քանակական աճի պարագայում ի հայտ է գալիս բավարար ֆինանսավորում ապահովելու խնդիր, եթե չխոսենք անգամ կրթության որակական ասպեկտներից: Առաջին հայացքից կարող է թվալ, որ բուհական համակարգում ներգրավվածության աճը ունի բավարար ֆինանսավորում շնորհիվ ուսման վարձերի, սակայն, հեղինակի կարծիքով, նման եղանակը հղի է մի շարք վտանգներով:

Եթե փորձենք Հայաստանում բարձրագույն կրթության մասսայականացումը դիտարկել միջերկրային համատեքստում, ապա կստանանք հետևյալ պատկերը: Գծապատկեր 2.2-ից տեսանելի է, որ 2000-2010թթ. բուհական համակարգում ներգրավվածության միջին ցուցանիշը Հայաստանում կազմել է 34%, որով երկիրը զբաղեցրել է 67-րդ հորիզոնականը 181 երկրների շարքում՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Թուրքիան, Ադրբեջանը, Չինաստանը, Իրանի ԻՀ և շատ այլ երկրներ: Իհարկե, այս ցուցանիշով Հայաստանը դեռ ետ է մնում այնպիսի երկրներից, ինչպիսիք են ՌԴ-ն (69%), ԱՄՆ (82%), Ֆինլանդիան (90%), Կորեայի Հնր. (94%) և այլն:

Չեռնպահ մնալով ուսանողների թվաքանակի աճի պատճառների և որակական հետևանքների քննարկումից՝ արձանագրվել է մի կարևոր հանգամանք, որ

---

29 Այս և հետագա շարադրանքում վիճակագրական տվյալների աղբյուր է հանդիսացել ՀՀ ԱՎԾ "ՀՀ սոցիալական վիճակը" տարբեր տարիներին հրապարակած տարեգրքերը, ինչպես նաև Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԵՍԿՈՅԻ պաշտոնական աղբյուրները:

ուսանողների ներգրավվածության նման աննախադեպ աճը անհնար է պատկերացնել առանց ֆինանսական կառավարման համակարգի ձևափոխումների անհրաժեշտության:

Ուսանողների թվաքանակի աճը ուղեկցվել է ոչ թե պետական ֆինանսավորման համաչափ աճով, այլ, ընդհակառակը, նվազել է պետության ֆինանսավորման բաժինը: Հանգամանք, որը չի նպաստում ոչ կրթության հասանելիության, ոչ կրթության որակի և ոչ էլ ոլորտի հանրային գործառույթների պահպանմանը:

Գծապատկեր 2.2.



Տարբեր երկրների բուհական համակարգերում համախառն ներգրավվածության գործակիցը: Աղբյուրը՝ World Bank Indicators, http://databank.worldbank.org/Data/Home.aspx // վերջին այցի ամսաթիվը՝ 01.10.2012թ.

Ինչ վերաբերում է համակարգի արդյունավետության հիմնական ցուցանիշներին, ապա այս առումով, հարկ է նշել, որ ուսանողների թվաքանակի աճն ուղեկցվել է դասախոսական կազմի զգալի աճով: Այն 2010-2011թթ. հատել է 12.000-ի սահմանը: Մինչդեռ 1996թ-ին եղել է շուրջ 4000 դասախոս: Սակայն առավել կարևոր է այն հանգամանքը, որ 1999թ.-ից ի վեր կտրուկ ընկել է ուսանող/դասախոս հարաբերակցությունը 13,5:1-ից 6:1-ի: Ուսանող/դասախոս հարաբերակցությունն իր կայուն աճն է ունեցել մինչև 2009թ.՝ հասնելով 9.4:1-ի, սակայն այդ աճը սկսել է նվազել հաջորդող տարիներին՝ 2011թ.-ին հասնելով 7.5:1-ի: Վերջինս նշանակում է, որ նվազել է արդյունավետության մակարդակը ռեսուրս-արդյունք ցիկլում: Ինչ խոսք, այնպիսի համալսարաններում, ինչպիսին Հարվարդի համալսարանն է, այդ հարաբերակցությունը հասնում է 7:1-ի[30], դա մի կողմից հնարավորություն է տալիս առավել սերտ շփում ապահովել դասախոսի և

30 http://usedu.ru/harvard-university/7-professorsko-prepodavatelskiy-sostav-garvarda.html // վերջին այցի ամսաթիվը՝ 05.02.2013թ.:

ուսանողների միջև, սակայն, չպետք է մոռանալ, որ Հարվարդի համալսարանում ուսման վարձն ավելի քան տասնյակ անգամ գերազանցում է ՀՀ բուհական համակարգում գործող ուսման վարձի մակարդակը: Հետևաբար, ՀՀ բուհական համակարգի ֆինանսական խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ուսանող դասախոս առավել մեծ հարաբերակցության ապահովել: Վերջինս նշանակում է ռեսուրսների առավել ինտենսիվ օգտագործում և ֆինանսական արդյունավետության առավել բարձր մակարդակ:

Այսպիսով կարելի է փաստել, որ ուսանողների ներգրավվածության աճին զուգընթաց դասախոսական կազմի թվաքանակն առավել մեծ տեմպերով է ավելացել թե ուսանողների թվի համեմատությամբ և թե բուհերի:

Ամփոփելով վերջին տարիներին ՀՀ բուհական համակարգի քանակական և արդյունավետության հիմնական ցուցանիշների վերլուծությունը՝ նշվել է այն հիմնական եզրակացությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են ֆինանսական հարցերին:

1. Բուհական համակարգում զգալիորեն ավելացել է ուսանողների թվաքանակը: Մեծացել է ներգրավվածության գործակիցը: Տրամաբանորեն ենթադրվում է, որ այս հանգամանքը դրական ազդեցություն կունենա ուսման վարձավճարներից ստացվող ֆինանսական եկամուտների վրա: Սակայն դրան զուգահեռ նվազել է ուսանող դասախոս հարաբերակցությունը և ավելացել են բուհերի ընթացիկ ցախսերը:
2. Պետական ֆինանսավորման գրեթե աննշան 17%-ի հասնող մակարդակը հարուցում է համակարգում կրթության մատչելիության և հանրային բնույթի թուլացման խնդիրներ:
3. Պետական բուհերում նվազել է նաև ուսանողներին բաժին ընկնող շենքերի և շինությունների մակերեսը, որն իր բացասական հետևանքները կարող է ունենալ կրթության որակի վրա և որը փաստում է, որ վերջին տարիներին ՀՀ բուհական համակարգում չեն արվել զգալի կապիտալ ներդրումներ:

Այնուհետև ներկայացվել են ՀՀ բուհական համակարգի ֆինանսական ցուցանիշները: Մասնավորապես, կրթական ծախսերի մասնաբաժինը պետական ծախսերում, որը ցույց է տալիս, ոչ այնքան ֆինանսավորման մակարդակի բավարար կամ անբավարար լինելը, այլ ներկայացնում է պետության կողմից ոլորտում վարվող ֆինանսական քաղաքականության գերակայությունները: Այդ տեսակետից կարելի է փաստել, որ 2012թ. դրությամբ կրթության հոդվածը ՀՀ պետ բյուջեում իրեն հատկացված միջոցների ծավալով (10%) զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը՝ հետ մնալով սոցիալական պաշտպանության (29%), ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (16%), պաշտպանության (15%), տնտեսական հարաբերությունների ու շրջակա միջավայրի պահպանության (11%) հոդվածներին հատկացված միջոցներից: 2003-2012թթ. ընթացքում կրթությանը հատկացված միջոցները համեմատական առումով հասել են իրենց բարձրակետին 2005 և 2006թթ. ստանալով համապատասխանաբար 16% և 17%, ընդ որում՝ այդ ցուցանիշներով կրթության հոդվածը գրավել է 1-ին հորիզոնականը՝ առաջ անցնելով ՀՀ բյուջեի մյուս բոլոր ծախսային հոդվածներից:

Կրթության վրա կատարված պետական ծախսերի մակարդակը բնութագրող հաջորդ կարևոր ցուցանիշն է կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Եվ եթե նախորդ կրթության ծախսեր/բյուջե հարաբերակցությամբ Հայաստանը տարբեր տարիներին զբաղեցնում էր 100 երկրի հաշվարկով 51-ից 81-րդ հորիզոնականները, ապա կրթական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությամբ զբաղեցնում է առավել ստորին՝ 81-ից 95-րդ հորիզոնականներն աշխարում: Եթե հաշվարկենք 2000-2010թթ. միջին ցուցանիշները, ապա Հայաստանը 174

երկրների շարքում կզբաղեցնի 145-րդ տեղը իր (2.8%) ցուցանիշով՝ իրենից առաջ թողնելով Ադրբեջանին (3.1%), Թուրքիային (2.8%), Ճապոնիային (3.6%), ՌԴ-ին (3.6%) և մի շարք այլ երկրների (տես գծապատկեր 2.9): Ընդ որում՝ միջին եկամտի երկրախմբում այդ ցուցանիշը 2000-2008թթ. տարբեր տարիներին կազմել է 4.0%-ից 4.4%, մինչդեռ նույն տարիներին Հայաստանում այդ ցուցանիշը տատանվել է 2.1-ից 3.2%-ի միջակայքում՝ զիջելով իր իսկ երկրախմբին 1.9-ից 1.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 2.9.



Տարբեր երկրներում կրթական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում (%, 2000-2010թթ, միջին):
Աղբյուրը՝ World Bank Indicators, http://databank.worldbank.org/Data/Home.aspx
վերջին այցի ամսաթիվ՝ 01.10.2012թ.

Պարզվում է, որ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ում բարձրագույն կրթության ծախսերի տոկոսը Հայաստանում 2000-2010թթ. միջինում կազմել է 7.3%: Ցուցանիշ, որով Հայաստանը բազմակի անգամ հետ է մնում բոլոր տարածաշրջանների միջին ցուցանիշներից՝ Միջին եկամտի երկրներ (24.8%), Եվրոպա և Կենտրոնական Ասիա (26.8%), Եվրամիություն (27.4%), Բարձր եկամտի երկրներ (27.7%), Լատինական Ամերիկա (31.5%), Հարավային Ասիա (82.0%):

Ինչպես երևում է գծապատկեր 2.11-ից մեկ շնչի հաշվով բարձրագույն կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության 7.3%-անոց ցուցանիշով Հայաստանը 141 երկրների շարքում զբաղեցնում է վերջին՝ 141-րդ հորիզոնականը: Ընդ որում՝ վերջին՝ 2008-2010թթ.-ին այդ ցածր ցուցանիշը պահպանել է հարաբերական կայուն մակարդակ 7.1%-ից 7.5%-ի շրջակայքում:

Վերը նշված վիճակագրական տվյալներից և միջազգային համեմատականներից պարզ է դառնում, որ ՀՀ բարձրագույն կրթության համակարգը չի գտնվում կրթության ծախսերում գերակայությունների տիրույթում, ավելին՝ առհասարակ կրթության ոլորտը իր ծախսային գերակայությամբ 5-րդն է 2012թ. տվյալներով: Արդյունքում, բարձրագույն կրթության ֆինանսավորման

տարբեր ցուցանիշներով Հայաստանը հետ է մնում միջազգային համայնապատկերում, ընդհուպ զբաղեցնելով վերջին հորիզոնական:

Ուստի՝ պարզ է դառնում, որ ՀՀ բուհական համակարգին մնում է միայն ապավինել ֆինանսավորման այլընտրանքային միջոցների և մեխանիզմների ստեղծմանն ու օգտագործմանը:

Չմոռանանք, որ ուսանողների թվաքանակի աճը դեռևս ֆինանսական բավարար ներհոսքի երաշխիք լինել չի կարող, քանի որ այն սերտորեն կապված է ոչ միայն ուսման վարձի մեծության հետ, այլ նաև համակարգի արդյունավետության կառավարման այնպիսի ցուցանիշների հետ, ինչպիսիք են ուսանող/դասախոս հարաբերակցությունը և այլն:

Գծապատկեր 2.11.



Տարբեր երկրներում կրթական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում մեկ շնչի հաշվով (%, 2000-2010թթ, միջին)
Աղբյուրը՝ World Bank Indicators, http://databank.worldbank.org/Data/Home.aspx //վերջին այցի ամսաթիվ՝ 01.10.2012թ.

Համակարգի թերֆինանսավորման արդյունքում, եթե 2000թ.-ին ՀՀ աշխատաշուկայում գործազուրկների մեջ բարձրագույն կրթությամբ քաղաքացիների տոկոսը կազմում էր 12%, ապա 2005թ.-ին այդ ցուցանիշն աճել է մինչև 14%, իսկ արդեն 2008թ.-ին՝ հատել 20%-ի սահմանագիծը: Արդյոք, այս հանգամանքը չի՞ հաստատում այն հիպոթեզը, որ առկա է կրթության էքստենսիվ աճ և ֆինանսական կառավարման ոչ արդյունավետ համակարգ:

Այնուամենայնիվ, փորձենք ներկայացնել բուհական ծառայությունների համաշխարհային համայնապատկերը՝ հիմնվելով ոլորտում մշակվող քանակական (այլ ոչ թե արժեքային) վիճակագրության հենքի վրա:

Գծապատկեր 2.12-ում ներկայացված է աշխարհի տարբեր երկրներում առկա օտարերկրացի ուսանողների թվաքանակը և երկրի զբաղեցրած տեղն աշխարհի 119 երկրների շարքում: Պայմանականորեն այն կարելի է համարել բուհական ծառայությունների արտահանման քանակական (կամ բնեղեն) մեծություն: Գծապատկերից նկատելի է, որ աշխարհի բուհական ծառայությունների

խոշորագույն արտահանողներն են ԱՄՆ, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, որոնք կիսում են 1-ից 3-րդ հորիզոնականները 119 երկրների շարքում, համապատասխանաբար՝ 630, 348 և 247 հազար տարեկան ուսանողների թվաքանակով (2006-2011թթ. միջին տարեկան ցուցանիշ):

Նշենք, որ օտարերկրացի ուսանողների 2006-2011թթ. միջին տարեկան թվաքանակով՝ (4.4 հզ.) Հայաստանը 119 երկրների շարքում զբաղեցնում է 63-րդ հորիզոնականը: Այսինքն, գրեթե կիսում է երկրների ցանկը՝ իրենից առաջ թողնելով Ադրբեջանին (5 հզ.) և առաջ անցնելով Իրանից (2.1 հզ.) և Վրաստանից (0.5 հզ.) (տես գծապատկեր 2.12): Հատկանշական է, որ այս ցուցանիշով Հայաստանը գրանցել է առաջընթաց 2001-2006թթ. միջին ցուցանիշի համեմատությամբ 1.4 հզ ուսանողով, իսկ Ադրբեջանում և Վրաստանում այդ առաջընթացը կազմել է համապատասխանաբար 2.9 և 0,1հզ ուսանող:

Գծապատկեր 2.12.



Տարբեր երկրներում օտարերկրացի ուսանողների թվաքանակը և երկրի զբաղեցրած տեղն աշխարհի 119 երկրների շարքում:

Աղբյուրը՝UNESCO Institute for Statistics (UIS) // վերջին այցի ամսաթիվ՝ 01.10.2012թ. UIS Data Centre, October,2012

Աշխատանքում կատարվել է նաև ՀՀ բուհական համակարգում օտարերկրացի ուսանողների ներհոսքի դինամիկայի վերլուծություն: Վիճակագրական տվյալներից երևում է, որ ՀՀ բուհական համակարգում օտարերկրացի ուսանողների թվաքանակը տարբեր տարիներին տատանվել է 1900-ից 4200-ի ուսանողի միջակայքում: Ընդ որում՝ նկատվել է ուսանողների զուտ հոսքի անկում: Եթե 2005թ.-ին այն եղել է 1095 ուսանող, ապա 2008-2011թթ. այդ ցուցանիշը դարձել է բացասական, այսինքն՝ ՀՀ-ից արտասահման մեկնած ուսանողների թվաքանակը գերազանցել է ՀՀ բուհական համակարգ եկած օտարերկրացի ուսանողների թվին: Իսկ վերջինս ուղեկցվել է օտարերկրացի ուսանողների բացասական ներհոսքի անկմամբ: Ասել է, թե վերջին տարիներին ՀՀ բուհական համակարգում սովորելը պակաս գայթակղիչ է դարձել օտարազգի ուսանողների համար (տես գծապատկեր 2.15):

ՀՀ բուհական ծառայությունների արտահանման խթանման ուղիները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է դառնում վերլուծել և բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք այս կամ ձևով ազդում են կամ կարող են ազդել

բուհական ծառայությունների արտահանման (կամ օտարերկրացի ուսանողների ներգրավման) վրա:

Գծապատկեր 2.15.



ՀՀ ժամանած և մեկնած ուսանողների դինամիկան և զուտ հոսքը:
Աղբյուրը՝UNESCO Institute for Statistics (UIS), UIS Data Centre, October,2012:

Պարզվել է, որ օտարերկրացի ուսանողների ներհոսքի անկումը պայմանավորված է առավելապես գնային գործոնով՝ ՀՀ բուհական ծառայության գների աճով: Վիճակագրական տվյալների առավել խորը վերլուծության արդյունքում բացահայտվել են հետևյալ կարևոր հանգամանքները.

1. օտարերկրացի ուսանողների ներհոսքն ունի միջին տարեկան առավել մեծ առաձգականություն՝ 4.62, ՀՀ դրամի անուղղակի փոխարժեքի հանդեպ, քան թվարկած մյուս գործոնների հանդեպ,
2. օտարերկրացի ուսանողների ներհոսքն ունի էական հակադարձ -0.64 կախվածություն ԱՄՆ դոլարով արտահայտված ուսման վարձից, որը գործում է 1 տարվա ժամանակային լագով:

Կատարվել է թվային հաշվարկ՝ պարզելու համար, թե այլ հավասար պայմաններում որքան կկազմի ՀՀ բուհական համակարգում օտարերկրացի ուսանողներից ստացված ֆինանսական ներհոսքը 2020թ.-ին: Ըստ այդմ՝ ստացվել է, որ այլ հավասար պայմաններում ՀՀ ազգային դրամի արժեզրկումը տարեկան 7.4%-ով կարող է հանգեցնել արդեն 2021թ. օտարերկրացի ուսանողների ներհոսքի աճին մինչև 13259, վճարովի համակարգում առկա ուսանողների ընդհանուր թվաքանակը կհասնի 30253-ի, իսկ նրանցից ստացված ֆինանսական ընդհանուր ներհոսքը կկազմի 8.4 մլրդ դրամ, որը ոչ միայն կհավասարվի, այլ նույնիսկ 7%-ով

էլ կգերազանցի 2011թ. ոլորտին հատկացրած պետական 7.8 մլրդ դրամի ֆինանսավորմանը:

Ատենախոսության երրորդ՝ ***"ՀՀ բուհական համակարգի ֆինանսավորման խնդիրների լուծման ուղիները"*** գլխում, ամփոփելով վերոնշյալ գլուխներում կատարված հաշվարկները և վերլուծությունները՝ մշակվել են դրանց հաղթահարման ուղիները:

Մասնավորապես հեղինակի կողմից առաջարկվել են ֆինանսավորման համակարգի հետևյալ գերակա նպատակները.

1. կրթություն և տնտեսություն հարատև ու ներդաշնակ փոխգործակցում (տնտեսական բնույթի նպատակադրում),
2. կրթության մատչելիության և հավասարության ապահովում (սոցիալական բնույթի նպատակադրում):

Հիմք ընդունելով ոլորտի գերակայությունները, անհրաժեշտ է ոչ միայն ավելացնել պետբյուջեից ոլորտին կապիտալ հատկացումները, այլ նաև անհրաժեշտ է ֆինանսավորումը դարձնել խիստ հասցեական՝ հիմք ընդունելով երկրի տնտեսական զարգացման հեռանկարները: Իսկ ինչ վերաբերում է ուսանողների կրթաթոշակներին, ապա առաջարկվել է կրթաթոշակների տրամադրումն իրականացնել ոչ թե բուհերի միջոցով, այլ ուղղակիորեն ուսանողներին՝ պետության կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների տեսքով:

Անդրադառնալով բուհական համակարգի ֆինանսավորման հոսքերին՝ հեղինակն առաջարկել է այլընտրանքային տեսակետներ, որոնք ներկայացված են սխեմա 3.2-ում:

Սխեմա 3.2. ՀՀ բուհական համակարգի ֆինանսական հոսքերի վերափոխված կառուցվածքը



Սխեմայով առաջարկվում է, որ պետությունն իր ֆինանսավորման հիմնական մասը հատկացնի ոչ թե ուղղակիորեն բուհերին, այլ՝ ուսանողներին և նրանց ընտանիքներին: Ընդ որում՝ ասվածը վերաբերում է ոչ միայն կապիտալ ֆինանսավորմանը, այլ նաև կրթաթոշակներին (տես սխեմայում 5-րդ և 6-րդ հոսքերը):

Ըստ հեղինակի՝ անհրաժեշտ է ՀՀ բուհական համակարգի ֆինանսավորման հոսքերում իրականացնել հետևյալ քաղաքականությունը.

1-ին հոսք՝ պահպանել, սակայն հատկացումների հիմքում դնել այլ սկզբունքներ և վերածևակերպել այդ հատկացման նպատակայնությունը:

2-րդ հոսք՝ ստեղծել այնպիսի ճկուն և արդյունավետ մեխանիզմներ, որոնք կապահովեն մասնավոր հատվածի ներգրավման ներուժի առավելագույն իրականացում:

3-րդ հոսք՝ ստեղծել այնպիսի ճկուն և արդյունավետ մեխանիզմներ, որոնք կապահովեն տնային տնտեսությունների համար ֆինանսական ռեսուրսների և օգնության առավելագույն մատչելիություն:

4-րդ հոսք՝ ավելացնել ուսման վարձերից ստացվող ֆինանսական ներհոսքը՝ նպատակաուղղված խթանելով ՀՀ կրթական ծառայությունների արտահանումը:

5-րդ հոսք՝ պետության կողմից տրամադրել անվանական կրթաթոշակներ ուղղակիորեն ուսանողներին՝ հիմնվելով սոցիալական վիճակի վրա:

6-րդ հոսք՝ ուսանողներին տրամադրել ուսման ֆինանսավորման արտոնագրեր:

Անդրադառնալով վերը թվարկած ֆինանսական հոսքերի կառավարման սկզբունքներին և մեխանիզմներին՝ հեղինակի կողմից մշակվել են մի շարք առաջարկություններ:

Այսպես, առաջին հոսքը՝ Կապիտալ բյուջետային հատկացումը, անհրաժեշտ է ուղղորդել այն մասնագիտացումներին, որոնք պահանջարկված չեն կամ համեմատաբար թույլ է նկատվում դրանց պահանջարկը ՀՀ կրթական ծառայությունների շուկայում և որոնք, սակայն, անհրաժեշտ են երկրի հարատև տնտեսական զարգացման համար: Հեղինակն առաջարկում է միջոցների նշյալ բաշխումն իրականացնել հետևյալ մեթոդով.

- Քայլ 1-ին՝ պետությունը սահմանում է տվյալ տարվա համար հետևյալ մեծությունները.
  - t-րդ տարում բարձրագույն կրթության համար պլանավորված պետական բյուջեն (B^t),
  - գերակա համարվող i-րդ մասնագիտացման պետպատվերով տեղերի քանակը (q_i),
  - t-րդ տարում մեկ տեղին բաժին ընկնող վճարաչափի նորմատիվային արժեքը (b^t), որը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի՝ $b^t = \frac{B^t}{\sum_{i=1}^{n} q_i}$, որտեղ n-ը գերակա համարվող մասնագիտացումների քանակն է:
- Քայլ 2-րդ՝ պետությունը, սահմանելով մասնագիտացման մեկ տեղի նորմատիվային արժեքը, հայտարարում է բաց մրցույթ՝ ըստ մասնագիտացումների համապատասխան լոտերի: Մրցույթի մասնակից բուհերը տրամադրում են ինչպես իրենց գնային առաջարկները, այնպես էլ տվյալ մասնագիտացման տեղերի այն քանակությունները, որոնց մասով նրանք պատրաստ են կատարել պետության պատվերը: Ընդ որում, բուհերի կողմից տրվող գնային առաջարկները կարող են լինել ինչպես մեծ այնպես էլ փոքր տվյալ տարվա նորմատիվային b^t արժեքից: Ինչպես նաև չի բացառվում, որ որևէ մասնագիտության գծով բուհերի առաջարկված քանակները ընդհանուր առմամբ ավել կամ պակաս լինեն տվյալ մասնագիտացման պետական պատվերի q_i քանակից:

- Քայլ 3-րդ՝ իրավիճակային 4 տարբերակների կառավարում:
  1. Իրավիճակ 1-ին՝ բուհերի կողմից առաջարկվել են նորմատիվայինից ցածր գին և պետպատվերի տեղերից ավելի շատ տեղեր: Այս դեպքում պետությունը կատարում է ընտրություն առաջնորդվելով լավագույն գին/որակ համամասնության վրա: Ընդ որում, որակի հարցում առաջնորդվում է բուհերին վերաբերող մի շարք ցուցանիշներով (տեխնիկական հագեցվածություն, կառավարման ներքին և արտաքին արդյունավետություն, հավատարմագրում և այլն): Իսկ խնայված միջոցներով պետությունը կարող է կամ ավելացնել պետպատվերով տեղերի քանակը կամ այդ միջոցներն ուղղել այլ՝ ենթակառուցվածքային խնդիրների լուծմանը:
  2. Իրավիճակ 2-րդ՝ բուհերի կողմից առաջարկվել են նորմատիվային գնից բարձր գին, սակայն պետպատվերի տեղերից ավելի շատ տեղեր: Այս դեպքում պետությունը կարող է բանակցել և իջեցնել առաջարկված գները կամ գտնել լրացուցիչ ֆինանսավորում: Հնարավոր է նաև իրականացնել պետպատվերով տեղերից որոշակի քանակական կրճտում, որի հաշվին նորմատիվային գինը կաճի և կհամապատասխանի մրցույթի մասնակից բուհերի գնառաջարկներին:
  3. Իրավիճակ 3-րդ՝ բուհերի կողմից առաջարկվել են նորմատիվայինից ցածր գին, սակայն պետպատվերի տեղերից պակաս տեղեր: Այս դեպքում պետությունը կարող է վերահայտարարել ամբողջ մրցույթը կամ էլ չբավարարված տեղերի մասով հայտը տեղափոխել հաջորդ տարի:
  4. Իրավիճակ 4-րդ՝ բուհերի կողմից առաջարկվել են նորմատիվայինից բարձր գին և պետպատվերի տեղերից պակաս տեղեր: Նման իրավիճակում պետությունը կարող է համադրել 2-րդ և 3-րդ իրավիճակային լուծումների մոտեցումները:

Հարկ է նշել, որ վերը նկարագրված մեթոդը հանդիսանալով առաջարկին ուղղված ֆինանսավորում, այնուամենայնիվ, նպաստում է մրցակցային միջավայրին և խթանում է բուհերի կառավարման արդյունավետության աճին:

Ֆինանսավորման 3.2 սխեմայում ներկայացված երկրորդ հոսքը մասնավոր հատվածից բուհերին տրվող օժանդակությունն ու վարկավորումն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ մասնավոր հատվածը այնքան էլ հետաքրքրություն չի ներկայացնում բուհական համակարգին աջակցելու հարցում: Այնուամենայնիվ, գաղտնիք չէ, որ այսօր մի շարք նորաբաց և կայացած ընկերություններ ցանկանում են վերապատրաստել իրենց աշխատակիցներին կամ բարձրացնել նրանց որակավորման մակարդակը: Այս հարցում մասնավոր հատվածին ընդառաջ գնալու համար բուհերը պետք է քայլեր ձեռնարկեն՝ տալով հնարավորություն մասնավոր ընկերություններին կրթական ծրագրի այս կամ այն առարկայական մոդուլից հենց վճարովի հիմունքներով օգտվելու: Այսինքն, բուհերը պետք է իրացնեն իրենց կողմից սպասարկվող կրթական ծառայությունները ոչ միայն կրթական ծրագրերի համապարփակ եղանակով, այլ նաև առանձին առարկաների և/կամ մոդուլների մասնակի իրացման եղանակով: Ինչ վերաբերում է առարկայական ծրագրի (կրթական մոդուլի) գնանշման խնդրին, ապա, առաջարկվել է ինքնարժեքով և շուկայական սկզբունքով գնանշման մոտեցումների համակցման մեթոդ:

Բուհական համամակարգի ֆինանսավորման երրորդ հոսքն է ուսանողներին և նրանց ընտանիքներին աջակցելը մասնավոր ընկերությունների և բանկերի

կողմից: Այն ներկայացվում է սխեմա 3.3-ում: Որտեղ առաջարկվում է ստեղծել Բարձրագույն Կրթության Ֆինանսավորման Երաշխիքային Հիմնադրամ (հետայսու՝ ԲԿՖԵՀ): Առաջարկվում է նաև վարկառու ուսանողի կողմից երաշխիքային հիմնադրամին վճարվելիք գումարի չափի սահմանման սկզբունք՝ արտացոլված բանաձևի տեսքով:

Սխեմա 3.3 Պետության կողմից ուսման վարկավորման երաշխավորումը ԲԿՖԵՀ միջոցով



Թվանշված գործառույթների նկարագրությունը.

1. բանկն ուսանողին տրամադրում է ուսման վարկ, որը երաշխավորված է պետության կողմից և ունի առավել ցածր տոկոսադրույք,
2. վարկառու ուսանողն իր հնարավորությունների սահմաններում և ժամկետներում մարում է ստացած վարկային պարտավորությունը բանկին,
3. պետությունը բանկին տրամադրում է երաշխիք, ինչպես նաև ծածկում է ուսանողի կողմից կատարված թերի վճարումներից գոյացած պարտքը,
4. ուսանողը նախապես սահմանված կարգով պարտավորվում է իր աշխատանքային կյանքի ընթացքում մարել ԲԿՖԵՀ-ին իր ունեցած պարտքը,
5. պետությունը կառավարում է ԲԿՖԵՀ-ն՝ նրա ֆինանսական մուտքերն ու ելքերը:

Այսպիսով, ուսման վարկավորման համար երաշխիքային հիմնադրամի ստեղծումը մեծ դեր կարող է ունենալ պետության կողմից տրամադրվող երաշխիքների և ուսման վարկերի հասանելիության ապահովման հարցում, քանի որ երաշխիքի առկայություն կփոքրացնի վարկատուների ռիսկը և այդպիսով կնվազեցնի վարկավորման տոկոսադրույքը:

Բուհական համակարգի ֆինանսավորման չորրորդ հոսքը՝ ուսման վարձավճարները, հանդիսանում են ներկայիս համակարգի ֆինանսավորման հիմնական աղբյուրը (տես սխեմա 3.2): ՀՀ բուհական համակարգի ֆինանսական ներհոսքի ավելի քան 80%-ը ձևավորվում են ուսման վարձավճարներից:

Այստեղ հաշվի առնելով ՀՀ ներքին շուկայի խիստ սահմանափակ տարողությունը և բուհական համակարգի զարգացման համար ֆինանսական միջոցների առաջանցիկ անհրաժեշտությունը՝ առաջարկվել է ՀՀ բուհական ծառայությունների իրացումը արտաքին շուկաներում (օտարերկրացի ուսանողների ներգրավումը) դարձնել ռազմավարական հարց:

Արված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ բուհական համակարգը ունի իր ծառայություններն արտահանելու զգալի ներուժ: Ընդ որում, ծառայությունների արտահանումից ստացվող դրամական ներհոսքը կարող է իր մեծությամբ նույնիսկ գերազանցել ՀՀ պետբյուջեից բարձրագույն և հետբուհական

կրթությանը հատկացված միջոցներին, եթե հնարավոր լինի հաղթահարել փոխարժեքով պայմանավորված գնային գործոնը:

Մի քանի առանցքային քայլեր, պետք է հանդիսանան ոլորտում քաղաքականության հենասյուները.

1. բարձրագույն կրթության միջազգային մարքեթինգի իրականացում,
2. օտարերկրացի ուսանողների համար ենթակառուցվածքային գործոնների ապահովում,
3. ոլորտում համապարփակ վիճակագրության մշակում և իրականացում,
4. արտահանման և գնանշման ճկուն մեխանիզմների ներդրում,
5. պետական նորմատիվաիրավական դաշտի ադապտացում, բուհերի գործունեությունը միջազգային ուղղով տանող դրույթների մշակում:

Այնուհետև հեղինակը ներկայացրել է ՀՀ բուհական համակարգի ֆինանսավորման հինգերորդ և վեցերորդ հոսքերի մասով իրա առաջարկները (տես սխեմա 3.2): Առաջարկվում է, հետևելով բուհական համակարգի ֆինանսավորման միջազգային փորձին, ստեղծել պահանջարկին ուղղված ֆինանսավորում և վերջինիս իրագործման արդյունավետ մեխանիզմներ: Այդ մեխանիզմներից մեկն է հանդիսանում անուղղակի ֆինանսավորման արտոնագրային (վաուչերային) եղանակը, երբ պետական միջոցները բուհերին ուղղելու փոխարեն տրամադրվում են ուսանողներին, որոնք իրավունք են ստանում այդ արտոնագրում ամրագրված միջոցների հաշվին ընտրել այս կամ այն բուհը և մասնագիտությունը:

Սխեմա 3.4 Պետության կողմից ուսման արտոնագրերի տրամադրման մեխանիզմը



Սխեմա 3.4-ում ներկայացված է այն մեխանիզմը, որտեղ պետությունը ուսանողին տրամադրում է ուսման արտոնագիր (1), որը ներկայացնելով բուհին (2)՝ ուսանողը ստանում է իրավունք տվյալ բուհում սովորելու (3): Պետությունը, որպես արտոնագիր տրամադրող պարտավորվում է տվյալ բուհին տրամադրել արտոնագրով սահմանված միջոցները (4)՝ ըստ էության, տարեց տարի մարելով տվյալ ուսանողի ուսման վարձը: Այնուհետև, ուսանողը պարտավորվում է կատարել համապատասխան մարում ԲԿՖԵՀ-ին (5): Նշենք, որ վերը ներկայացված մոտեցումը համընկնում է ուսման վարկավորման առաջարկվող մոտեցմանը: Այն տարբերությամբ միայն, որ պետությունը մարումը կտարում է ոչ թե բանկին՝ վարկի դիմաց, այլ բուհին՝ ծառայության մատուցման դիմաց:

Ուսումնասիրելով ՀՀ բուհական համակարգի նորմատիվաիրավական դաշտը հեղինակը մշակել է առաջարկություններ հետևյալ հիմնական փաստաթղթերի մասով.

1. ՀՀ կրթության մասին օրենքը,
2. ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին,
3. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը,

4. Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն (ԼՀԾ) պետական հիմնարկի կանոնադրությունը,
5. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները,
6. Ուսումնական հաստատությանն օտար լեզվով կրթություն կազմակերպելու թույլտվություն տալու կարգը,
7. Խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիան:

Ընդ որում՝ նորմատիվաիրավական դաշտի մշակված առաջարկությունները կոչված են նպաստելու հետևյալ նպատակների իրականացմանը.

1. ՀՀ բուհական համակարգի ուղղորդում դեպի հեռավար (դիստանցիոն) կրթություն և միջազգային շուկաներ,
2. ՀՀ բուհական համակարգում օտարերկրացի ուսանողների համար բարենպաստ պայմանների ստեղծում,
3. ՀՀ բարձրագույն կրթական ծառայությունների իրացման առավել ճկուն համակարգի ստեղծում:

Աշխատանքի ***"Եզրակացություն"*** բաժնում, ամփոփելով նախորդ երեք գլուխներում կատարված վերլուծությունները, ատենախոսության նպատակներից ելնելով, ներկայացված են հիմնական արդյունքները:

Մասնավորապես.

- Մասնավոր հատվածից ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով՝ անհրաժեշտ է ձևավորել ճկուն և արդյունավետ մեխանիզմներ: Ըստ այդմ՝ բուհերը պետք է քայլեր ձեռնարկեն՝ տալով հնարավորություն մասնավոր ընկերություններին կրթական ծրագրի այս կամ այն մոդուլից օգտվելու՝ հենց վճարովի հիմունքներով: Այսինքն, բուհերը պետք է իրացնեն իրենց կողմից սպասարկվող կրթական ծառայությունները ոչ միայն կրթական ծրագրերի համապարփակ եղանակով, այլ նաև առանձին առարկաների և/կամ մոդուլների մասնավոր եղանակով: Այստեղից էլ առաջանում է առարկայական ծրագրերի արժեքի գնահատման և գնանշման անհրաժեշտություն:
- Անհրաժեշտ է պետության ֆինանսական միջոցներն ուղղել այն մասնագիտացումներին, որոնք պահանջարկված չեն կամ համեմատաբար թույլ է նկատվում դրանց պահանջարկը ՀՀ կրթական ծառայությունների շուկայում և որոնք, սակայն, անհրաժեշտ են երկրի հարատև տնտեսական զարգացման համար:
- Տնային տնտեսությունների համար ֆինանսական ռեսուրսների և օգնության առավելագույն մատչելիության ապահովման համար՝ ցանկալի է, որ պետությունը միջոցներ ձեռնարկի խթանելու առևտրային բանկերի կողմից վարկավորումը՝ այն առավել մատչելի և պակաս ռիսկային դարձնելու ուղղությամբ: Վարկավորման մեխանիզմը պետք է լինի այնպիսին, որպեսզի վարկավորումը լինի երկարաժամկետ՝ ուսանողը հնարավորություն ունենա վարկը մարել բուհն ավարտելուց հետո: Այդ նպատակին հասնելու համար առաջարկում ենք, որ պետությունը ստեղծի բարձրագույն կրթության ֆինանսավորման երաշխիքային հիմնադրամ և ստանձնի ուսման վարկերը երաշխավորողի դեր:
- ԲԿՖԵՀ միջոցների կանխիկ հոսքերի սահուն կառավարման նպատակով՝ առաջարկում ենք կիրառել նվիրատվությունների, պարտատոմսերի թողարկման, ժամանակավոր պետական միջոցների ներգրավման, ավելցուկային միջոցներից տոկոսների կուտակման գործիքներ:

- Ուսման վարձերից ստացվող ֆինանսական ներհոսքի ավելացման նպատակով՝ անհրաժեշտ ենք համարում ՀՀ կրթական ծառայությունների նպատակաուղղված խթանումը: Ասել է թե՝ ՀՀ բուհական համակարգը դուրս բերել միջազգային ասպարեզ առավել համակարգված եղանակով:
- ՀՀ բուհական ծառայությունների արտահանման խթանման նպատակով ցանկալի կլիներ կազմակերպել կրթական ծառայությունների ամենամյա ցուցահանդես և մասնակցել միջազգային համանման ցուցահանդեսներին: Ընդ որում, կրթական ծառայությունների միջազգային ցուցահանդեսներին մասնակցությունը Հայաստանը կարող է իրականացնել մեկ պատուհանից՝ համախմբելով հիմնական բուհերին իրենց ծառայությունների համալիրով:
- Անհրաժեշտ է նաև զարգացնել ոլորտի վիճակագրությունը: Այն պետք է շեշտադրի ոչ այնքան ընդհանրական և քանակական ցուցանիշների համապարփակ արձանագրումը, այլ պետք է մշակվի նաև առավել խորքային, արժեքային և որակական տեղեկությունների ստացման մեխանիզմներ՝ հատկապես օտարերկրացի ուսանողների մասով:
- Անհրաժեշտ է ներդնել բոլոր համապատասխան տեխնոլոգիաները՝ ՀՀ բուհական համակարգում անդրսահմանային մատակարարման եղանակը զարգացնելու համար: Դա հնարավորություն կտա օտարերկրացի ուսանողներին սպառել Հայաստանի կրթական ծառայությունը մնալով իրենց երկրում, ինչն իր հերթին զգալիորեն կփոքրացնի ուսանող լինելու հավելյալ, հարակից ծախսերի գործոնի բացասական դերը:
- Ինչ վերաբերում է պետական նորմատիվաիրավական դաշտին, ապա այստեղի բարեփոխումները, պետք է ուղղված լինեն ոչ միայն բարձրագույն կրթության ծառայությունների արտահանման հարթ և սահուն նորմատիվային միջավայրի ապահովմանը, այլ նաև պետք է հստակ սահմանեն չափանիշներ և կարգավորիչ մեխանիզմներ, որոնք որպես լծակ կներազդեն առանձին բուհի գործելակերպի վրա՝ ուղղորդելով նրան դեպի միջազգային շուկաներ: Պետության կողմից նմանօրինակ քայլ կարող է հանդիսանալ բուհերի սերտիֆիկացման և/կամ հավատարմագրման գործընթացներում միջազգայնացմանը նպաստող դրույթների և չափանիշների ամրագրումը:
- Անհրաժեշտ է նաև հնարավորինս ազատականացնել օտարերկրացի դիմորդների ընդունելությունը՝ առանց քննության, միայն որոշ փաստաթղթերի հիման վրա: Բացի այդ, ցանկալի է, որ օտարերկրացի ուսանողներն ունենան առավել լայն հնարավորություն ոչ միայն կրթական ծրագրերի, այլ նաև առարկայական ծրագրերի և առանձին մոդուլների ընտրության առումով:

Հետազոտության շրջանակներում հեղինակի մողմից հրապարակվել են հետևյալ հոդվածները.

1. Մեյրոյան Վ.Փ., Հարությունյան Հ.Զ., “ՀՀ բուհական կրթական ծառայություններն անդրազգային կրթության համատեքստում”, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, ԵՊՀ, 2013թ., էջ 153-163:
2. Մեյրոյան Վ.Փ., Հարությունյան Հ.Զ., “ՀՀ բուհական համակարգի ինքնաֆինանսավորման խնդիրները ոլորտի միջազգայնացման համատեքստում”, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, ԵՊՀ, 2013թ., էջ 263-274:

3. Վ. Մեյրոյան Բարձրագույն կրթության ծախսերի վերլուծությունը եվրոպական միությունում Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան: ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու – 3(7), էջ145-էջ154 Երևան 2010

4. Վ.Մեյրոյան Ա.Սարգսյան Կազմակերպության գործարար ակտիվության վերլուծության էությունը,դերն ու նշանակությունը տնտեսավարման նոր պայմաններում Հայաստանի Հաշվապահների և Աուդիտորների ասոցիացիա, Հաշվապահական Հաշվառում և Աուդիտ -1/2010, էջ19-էջ26 Երևան 2010

5. Վաղարշակ Մեյրոյան Հայաստանի բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման մեխանիզմների և ցուցանիշների վերլուծություն Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, 12(138) 12/2011 էջ61-էջ64 Երևան 2011

Мейроян Вагаршак Паризович

«Проблемы финансового управления высшего образования в РА»

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальностям Ը.00.02 – «Экономика, управление хозяйством и его отраслями».
Защита состоится 2013г. 29-ого ноября 15:00 часов на заседании специализированного совета ВАК РА 015 при ЕГУ по адресу: 375009, Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению основных теоретических и практических вопросов финансовой системы высшего образования РА. Изучена система высшего образования РА, в том числе и основные вопросы алтернативных финансовых потоков, такие как привлечение иностранных студентов. Предложены инновационные методы стимулирования финансовых притоков в систему высшего образования.

Основной целью исследования является разработка комплексного подхода и механизмов совершенствования финансовой системы высшего образования РА с помощью выявления различных проблем финансирования, нормативно правовой базы и государственной политики в сфере высшего образования.

В диссертации рассмотрены нормативно-правовые аспекты с целью обеспечения благоприятной законодательной базы для привлечения дополнительных финансовых средств, а также для повышения эффективности финансовой деятельности вузов. Привлечение ностранных студентов в сферу высшего образования рассматривается как основной механизм привлечения дополнительных финансовых средств. С целью обеспечения гыбкости при привлечении финансовых средств в сферу высшего образования разработаны и предложены также другие механизмы на основе изучения мирового опыта. Анализированы вопросы доступности и ровенства в сфере высшего образования РА.

Представлены новейшие тенденции финансовых реформов как в мире, так и в РА. Анализированы теоретические и методологические основы финансовых реформов системы высшего образования, вопросы взаимосвязи с частным сектором экономики, с качеством образования и т.д. На основе изучения мирового опыта реформирования в сфере высшего образования, рассмотрены возможности внедрения новых принципов и направлений финансового управления вузами. Выявлены проблемы государственного регулирования и управленческой системы высшего образования в РА.

Используя широкую статистическую базу UNESCO (UIS), WB (WDI) и Национальной статистической службы РА, были выявлены основные глобальные тенденции в сфере финансирования, интернационализации, и проведения реформов в сфере высшего образования.

Следует отметить, что в диссертации уделено особое внимание на вопросы интернационализации сферы, ибо при нынешних закономерностях и тенденциях развития глобального мира международные связи и экономические отношения проникли также в сферу высшего образования являясь неотемлемой частью почти любой сферы образовательной деятельности.

Основная научная новизна состоит в следующем:

- Предложен альтернативный подход совершенствования финансовых потоков в системе высшего образования РА и разработан новый механизм финансирования образования, связанный с созданием Гарантийного Фонда Финансирования Высшего Образования (ГФФВО).
- Разработаны методы совершенствования финансового управления системой высшего образования. В частности, формула расчета начислений средств из гос. бюджета, способ ценообразования отдельных учебных программ, а также метод определения размера суммы подлежащей выплате ГФФВО.
- Изучая вопросы интернационализации системы высшего образования, представлены практические и методические предложения экспортирования услуг высшего образования с целью усиления притока финансовых средств в систему.
- В результате всестороннего анализа законодательной базы, имеющей прямое или косвенное влияние над финансовым управлением системой высшего образования РА, выявлены возможности повышения эффективности управления финансовой деятельности вузов и разработаны комплексные меры совершенствования нормативно-правового поля сферы.

Теоретические и практические результаты диссертации могут быть использованы в государственном секторе (Парламент РА, Министерство образования и науки РА, Министерство финансов РА и т.д.), а также и в исследованиях в сфере высшего образования, финансового управления и международной экономики.

Диссертация состоит из введении, трех глав, выводов и рекомендаций, 6 приложений и списка литературы. Общий обьем диссертации (без приложений и списка литературы) состовляет 154 страниц.

VAGHARSHAK P. MEYROYAN

"THE PROBLEMS OF FINANTIAL GOVERNANCE OF HIGHER EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA"

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Candidate of Economics in the Field of "Economics, Management of Economy and its Sectors" 08.00.02.

The Defense of the Dissertation will take place at _15:00, November 29, at the Meeting of Specialized Council 015 of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovian St., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

The dissertation is dedicated to the study of the main theoretical and practical questions related to the financial governance of higher education in the Republic of Armenia. The system of higher education of the Republic of Armenia, including the main questions of alternative financial flows, as well as those related to attracting foreign students have been examined.

The main aim of the aforesaid dissertation is the elaboration of the mechanisms, as well as holistic and complex approaches directed to the amelioration of the financial system of higher education of RA by means of revealing different problems in the sphere of financing.

The normative-legal aspects have been likewise studied in the paper having as an aim the assurance of favorable legislative base for attracting additional financial means as well as raising the effectiveness of financial activities of Institutions of Higher Education. The attraction of foreign students into the system of higher education is viewed as a core mechanism aimed at involving alternative financial means. In order to provide the flexibility in the process of attracting financial means into the system of higher education other mechanisms based of the study of world experience have been suggested.

Novel tendencies of financial reforms both in the world as well as in the Republic of Armenia have been presented. Theoretical and methodological bases of financial reforms of the system of higher education, the questions of correlation with the private sector of

economy, with the quality of education and etc. have been analyzed. Based on the study of world experience of reformation in the sphere of higher education, possibilities of implementing of new principles and directions of financial governance of Institutions of Higher Education have been studied. The problems of state regulation and governance of the system of higher education of the Republic of Armenia have been revealed.

The main global tendencies in the sphere of financing, internationalization as well as carrying out reforms have been revealed making use of the wide statistic base of UNESCO (UIS), WB (WDI) as well as the National Statistic Service of the RA.

It's worth mentioning that the questions of internationalization of the sphere have been paid a very meticulous attention, since in the light of current tendencies of the development of global peace, international connections and economic relations have penetrated into the sphere of higher education as well, being an inseparable part of nearly all spheres of educational activities.

The novelty of the research:

- An alternative approach meant for the improvement of financial flows in the system of higher education has been suggested. Alongside, a new mechanism meant for financing education, connected with the creation of Guarantee Fond for Financing Higher Education (GFFHE) has been elaborated.
- Methods aimed at ameliorating the financial governance of the system of higher education. In particular, a formula of calculating allocations from the state budget, means of pricing separate educational programs, as well as methods for determining the sums of money to be allocated from the GFFHE have been elaborated.
- Studying the question of internationalizing the system of higher education, practical and methodological suggestions of exporting the services of higher education with the aim of strengthening the financial flows into the system have been presented.
- As a result of thorough examination of legislative base, which has a direct as well as indirect influence on the financial governance of the system of higher education of RA, possibilities of rising the effectiveness of the governance of financial activities of Institutions of Higher Education have been revealed as well as complex means aimed at improving the normative-legal field of the sphere have been elaborated.

The theoretical and practical results of the dissertation can be used in the state sector (National Assembly of the Republic of Armenia, the Ministry of education of the RA, the

Ministry of Finance of the RA and else), as well as in different researches dedicated to the study of higher education, financial governance and international economy.

The dissertation is comprised of introduction, three chapters, conclusions and recommendations, 6 appendices as well as the list of literature. The volume of the dissertation (without appendices as well as the list of literature) is 154 pages.